ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » սեպտեմբերի 2021 թվականի N 10 - Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

որոշում եմ.

1. 2021 թվականի նոյեմբերի 14-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ղեկավարի և ավագանու անդամների մեծամասնական ընտրակարգով ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Անտառաշեն համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել սեփական առանձնատուն (հասցեն՝ գ.Անտառաշեն, 1փ. թիվ 17):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռաֆիկ Խառատյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » սեպտեմբերի 2021 թվականի N 11 - Ա

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

որոշում եմ.

2021 թվականի նոյեմբերի 14-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ղեկավարի և ավագանու անդամների մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող թեկնածուների համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղը՝

Մշակույթի կենտրոնի շենք՝ հասցեն գ.Անտառաշեն, 1 փողոց, շենք 5

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ռաֆիկ Խառատյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 12

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաշվի առնելով սեփական եկամուտների հավաքագրման բարձր ցուցանիշների ապահովումը և ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումը Անտառաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին պարգևատրել՝

1.Խառատյան Ռաֆիկ՝ մեկ ամսվա աշխատավարձի 100%-ի չափով;

2.Հարությունյան Քրիստինե՝ մեկ ամսվա աշխատավարձի 100%-ի չափով;

3.Բիրյուկովա Եկատերինա՝ մեկ ամսվա աշխատավարձի 50%-ի չափով;

4.Բիրյուկով Սերգեյ՝ մեկ ամսվա աշխատավարձի 100%-ի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռ.Խառատյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2021 թվականի N 13

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-026-0013-0012 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հովիկ Հրանտի Աբազյանին սեփականության իրավունքով պատկանող 06-026-0013-0012 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ Անտառաշեն համայնք, 1փ թիվ 91 :

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռ.Խառատյան**